Արձանագրություն

քիմիական նյութերի, լաբորատոր ապրանքների ու սարքերի ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի

ք. Երևան 17/04/18թ.

ժ. 10:30

Մասնակցում էին գնահատող աշխատակազմի՝

պատասխանատու՝ Պ. Էֆենդյանը

գնահատողներ՝ Ա. Փեփոյան

Լ. Շահբազյան

քարտուղար՝ Ե. Հարությունյան

Գնային առաջարկների բացման մասին

---

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 գնային առաջարկ ներկայացրել է հինգ մասնակից՝ «Դելտա» ՍՊԸ-ն՝ 7, 13, 27 չափաբաժինների մասով, «ԴԻԱԷՄ» ՍՊԸ-ն՝ 20, 27 չափաբաժինների մասով, «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն՝ 1, 4, 5, 14, 23, 27 չափաբաժինների մասով, «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ն՝ 1-6, 11, 12, 14, 16, 18, 19, 21-26, 28, 29, 30, 36, 37, 38 չափաբաժինների մասով և «Մեդիսար» ՍՊԸ-ն՝ 1-4, 6, 9-12, 14-22, 24-30, 32, 34-38 չափաբաժինների մասով:

1.2 գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

1.3 մասնակիցների գնային առաջարկներում պահանջվող փաստաթղթերն առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան: 6-րդ չափաբաժնի համար հավասար գնառաջարկներ են ներկայացրել «ԹԱԳՀԷՄ» և «Մեդիսար» ՍՊԸ-ները, հրավիրվել են բանակցության, որի արդյունքում «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ն գնի նվազեցում է կատարել: 5-րդ չափաբաժնի մասով ներկայացված երկու գնառաջարկներն էլ բարձր են նախահաշվային արժեքից, որի համար էլ բանակցության են հրավիրվել «ԹԱԳՀԷՄ» և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ները, սակայն գնի նվազեցում չի կատարվել և այդ չափաբաժինը համարվել է չկայացած: 20-րդ չափաբաժնի մասով գնառաջարկներ են ներկայացրել «Մեդիսար» և «ԴԻԱԷՄ» ՍՊԸ-ները: «Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած գնառաջարկը առանց ԱԱՀ-ի ավելի ցածր է «ԴԻԱԷՄ» ՍՊԸ-ի ներկայացրած գնառաջարկից, սակայն ԱԱՀ-ով արժեքը բարձր է նախահաշվային արժեքից, որի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվում «ԴԻԱԷՄ» ՍՊԸ-ն, որը ԱԱՀ վճարող չէ: 1-ին, 4-րդ, 23-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնառաջարկ է ներկայացրել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն, սակայն ՊԵԿ-ի կողմից ներկայացված պարտավորությունների վերաբերյալ ստացված տեղեկատվության արդյունքում պարզվել է, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց պարտավորություն, որի արդյունքում «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է և այդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից են ճանաչվել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցները:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 ընտրված մասնակից ճանաչել «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ին՝ 2, 3, 4, 6, 11, 12, 16, 18, 19, 22, 23, 24, 25, 26, 29, 30, 37 չափաբաժինների մասով, «Մեդիսար» ՍՊԸ-ին՝ 1, 9, 10, 17, 21, 27, 28, 32, 34, 35, 36, 38 չափաբաժինների մասով և «ԴԻԱԷՄ» ՍՊԸ-ն՝ 20 չափաբաժնի մասով: 5-րդ չափաբաժինը չկայացած է համարվում՝ նախահաշվային արժեքից բարձր գնառաջարկներ ներկայացվելու պատճառով, իսկ 31, 33 չափաբաժինները նույնպես չկայացած են համարվում՝ ոչ մի հայտ ներկայացված չլինելու պատճառով: 7, 8, 13, 14, 15 չափաբաժիններն էլ չկայացած են համարվել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշման արդյունքում: